



ԲԱԺԱՆՈՒՄ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար
 Տարեկան 12 ձր.
 Վեցամսեայ 6 »
 Արտասահմանի համար Տարեկան 15 »
 Վեցամսեայ 8 »
 Անկերկայի համար
 Տարեկան 3 ՏՐ.
 Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԻՅԻՎ ՎՃԱՐՆԵԼԻ

Մանկան սոցիալական
 երեխան համար 40 սանթիմ
 է. իսկ վերջին երեսի համար
 20 սանթիմ է. երեխան
 առի առկալներու համար
 20 Օլլ գեղջ կըլայ:

Պուշկարիոյ համար ձեռքի
 (15 ՍԱՆԹԻՄ)

ՇՆԱԲՈՒՄ

B. P. Kalmencarian
 (Autriche)
 Mechitharistangasse W. 4
 Vienne

ալ եւ զրու գրկն
 մերազորութեան հարցիկն

Редакция на вестникъ
 «Шаржумъ»
 Варна.

Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)

Գրութիւնք եւ լին տրուիր

Արտասահմանի համար ձեռքի
 (20 ՍԱՆԹԻՄ)

ԼՐԱԳԻՐ ԱՉԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵԲՇՈՒԹԻ ԵՒ ՇՆԱԲԱԹ ՈՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

ԺԱՍԱՆԱԿ ՉՈՒՆԻՆՔ

Ինքնազարգացումն անհատի մը առաջին պարտականութիւնն է, եթէ ստեղծող սնահատը փափաքող է իր միջավայրին մէջ կարեւոր դերք մը ստեղծելու և զայն օր աւուր բարձրացնել շնորհիւ:

Ինքնազարգացումը յառաջագիտութեան անհրաժեշտ պայմանը նկատուած է ամէն լուսաւոր և զարգացած ազգերու մէջ: Մեր մէջ սակայն, ցտաղի է խոստովանել, շատ քիչեր ըմբռնած են ինքնազարգացումի անձնութեան անհրաժեշտութիւնները և բազմաթիւ օգուտները:

Արհեստաւորը, — բացառութիւններ կան — իր հասուն երջանիկ օրերէն մնացած արջընին կամ մկրատին կառչած, չի խորհիր բնաւ իր գործին մէջ նորութիւն մը ներմուծելու ջանքն ընել. ուսուցիչը, իր ձեռքով մէթոտներով և մըլտած գաղափարներով բաւականացած, հետամուտ չըլլար երբէք գիտնալու թէ՛ ամէն օր ինչ նորանոր փոփոխութիւններ տեղի կունենան արդի մանկավարժութեան մէջ. քահանան ու վարդապետը, փակեզը գլուխին անցիւնէ ետք, մտածման առարկայ ունին միայն իրենց քսակն ու փորը:

Եթէ ասոնց հարցուի թէ ինչո՞ւ գամուած մնացեր էք ձեր տեղը, ինչո՞ւ ճիգ չէք ընել շարժելու և մտաւորապէս ու բարոյապէս զարգանալու, իբր պատասխան, անպատճառ պիտի ընդունիս անոնցմէ սա յաւիտեական յանկերզը. «այսպէս տեսեր եմ և այսպէս պիտի երթամ»: Իսկ կղերական դասը, իբր թէ չքմեղացումի թեթեւ ժպիտ մը չըլնեցողն վրայ, պիտի պատասխանէ քեզի. «ժամանակ չունինք»:

Ժամանակ ունիք սակայն, առաւօտեան ազօթքը լումմնէն ետք, հոս ու հոն երթալու և շաղկարատելու, ժամանակ ունիք ցերեկները մէկ քանի ժամ խրուկալու, ժամանակ ունիք զիրար բամբասելու և կզուրտելու, ժա-

մանակ ունիք կաթնաթոր սղիի և փրփրացէզ գարեջուրի բաժակներ կուշտ ու կուռ պարպելու. ժամանակ ունիք նոր հիւրի մը այցելութեան երթալու...

Ո՛չ, ո՛չ, տէրպապաներ և վարդապետներ, դուք այդ բաներուն համար կոչուած չէք: Չեր կոչումը բոլորովին տարբեր է, ձեր բոլոր պարտականութիւնները որոշապէս զժողովուն արդէն մեր երջանկայիշատակ ու յաւատարմութիւն սուրբ հայրերէն:

Հետեւեցէք Սահակի և Մեսրոպի, և վստահ եղէք որ այն ատեն ժողովուրդը մեծ անկախութեամբ և համակրալիք յարգանքով պիտի վերաբերուի ձեզ նկատմամբ:

Օրինակ, արմաշականները: Աստուք, երէկի արեղաները, գրաւեցին և պիտի գրաւեն միշտ համակրանքը ամէն քաղաքի ու գիւղի հայերուն, որոնց այցելեցին: Աստուք յաջողեցան և պիտի յաջողին ալ անկասկած, վասն զի օժտուած են զարգացած միտքով, բարի և օրինակելի վարքով ու բարքով:

Վաղուան մտատանջիկ հոգերէն զերծ էք դուք, քանի որ անգամ մը, արժանի կամ սիրտժան, փակեզը գլուխիդ անցուցեր էք:

Մի՛ ըսէք բնաւ թէ ժամանակ չունինք:

Կարգացէք ձեր պարագոյ ժամերուն, և միշտ կարգացէ՛ք, վասն զի ընթերցանութիւնը մարդուն միտքը կը սրէ, վասն զի ընթերցանութիւնը խաւար մը լեցնելու մէջ գիտութեանց և ուսման փողփողուն լոյսը կը սփռէ:

Ընթերցանութիւնը անհատի մը համար ինքնազարգացումի միակ միջոցն է. Այն ատեն միայն բարձրացուցած պիտի ըլլաք ձեր մտաւորական պաշարը, հետեւաբար ընկերականութեան մէջ ալ իրաւամբ պիտի ունենաք ձեզի յատուկ տեղն ու դիրքը:

«Որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ»:

ԲԱՆԻՎ

«ՄԵՆՔ ԱՆ ԿԸ ՀԱՍԿՆԱՆՔ»

Տրպարներու զարմանալի պէսպիսութիւնը որով արտասահմանի հայութիւնը ճոխացած կը գտնուի մէկ քանի տարիներէ ի վեր, սոփորականէն դուրս նմուշներ կը պարունակէ իր մէջ միամիտ հասկացողութեան, տղէտ ու այլանդակօրէն յաւակնոտ ըմբռնումներու: Այլատու թիւնը, ներող ու խուլ ազատութիւնը, զոր բազմամթիւ հայեր գտան Թուրքիոյ հեղձամղձուկ սահմաններէն դուրս — և ճիշտ ատիկալ գտնալու համար էր որ ամէն բան ձգելով խոյս տուած էին — անխուսափելի կերպով ունեցաւ իր տխուր ազդեցութիւնը այն շտապած ուղեղներուն վրայ, զորս միջավայրը և կեանքի նոր պայմանները ուղեղի յարաբերութեան մէջ կը գնէին լուրջ, խորհող ու զարգացած դասակարգին հետ, և որոնք խօսելու, կարգալու համար իրենց գտած գիւրութիւններէն փոխանակ համեստօրէն օգտուելու, պոռչտացող, հետտող, անգոտնող դատարկամիտներ կը դառնային:

Հիմակ անոնք ստուար քանակութիւն մը կը կազմեն, ծանծաղամիտ բանգէտները, որոնց գրէթէ ամէն անկիւն կը հանդիպիս արտասահմանի մէջ, մանաւանդ Պուլկարիա, Ամերիկա ու Եգիպտոս, այն տեղերն ուր հայ ամբոխ մը կայ յուզուող, պոռացող, աղմկօրէն ու խելաթղօրէն տրամաբանող, Եկեղեցին, սրճարանը, փողոցը, ուր որ վերջապէս ամբոխը սովորաբար կը յաճախէ, կը գտնուի նմուշները յեղակարծուտ խօլ թռիչներով գէպի մտածման վերին սահմանները սաւառնող ցաւագար, խել ու հաշմուած այդ ողբալի ուղեղներուն: Զիկայ խնդիր մը, ազգային, յեղափոխական, կրօնական, ընկերային, որուն վրայ տիրական ու բիրտ հեղինակութեամբ մը անոնք շահապարեն խանդավառօրէն խօսելու, աղմկելու և վճիռներ արձակելու վայրքը եթէ սրանեղութեանէ

մղուած համարձակիս շափ մը գնել իրենց անխոհեմ ու ծիծաղաշարժ յաւակնութեանը, ապտակի մը ուժգնութեամբը երեսիկ կը վարենն սա խօսքը:

— Բարեկամ, մենք ալ կը հասկընանք:

Կարգալ չգիտցողներ իսկ կան որոնք «լսելով լսելով գրթթէ ամէն բան սորված են և ի հարկին — ու անհարկի տեղն ալ — կրնան տրամաբանել ամէն տեսակ հարցի վրայ»: Մեր յեղափոխութիւնը կտրելու, թափելու գործը մաքրի այս վիժածներուն ձեռքն է անցեր կարծես: Ենկաբելի է զերծ մնալ անոնց անհեթեթ ընդհանրատուութիւններէն, անոնց գոհակ յարձակումներէն, անոնց խուլ և անիմաստ թշնամութեանէն: Առաջ հլու համակերպող ու մեքենականօրէն շարժուող տարրը կը կազմէին, հիմակ որոնք իր մը անգութ յանդգնութեամբը կը յարձակին այն անձերուն վրայ իսկ որոնց առջև գլխիկօր ու յարգական դիրք մը կը բռնէին շարունակ, ու իրաւամբ: Անոնց համար բան մը չի կայ այլևս նուիրական, յարգանքի ու պաշտաման արժանի: Յեղափոխական ամենէն մեծ արեւի գէմքը կընայ առակ նշաւակի ըլլալ «մենք ալ կը հասկնանք ճիշտութեան լեզունին խելայեղ տրամաբանութեան առջեւ, միտք ու ստուղանդ անոնց համար այլևս գոյութենէ դադրած յատուկութիւններ են. մեր մտաւորականութեան էն անվիճելի ներկայացուցիչները արհամարհանքով ոտքերու տակ կը կոխկուտուին:

— Ա՛ն ինչ գիտէ, մենք ալ կը հասկնանք անոր շափ:

Այս շատ յատկանշական բանաձեւը երթալով տարածուելու, ամբոխին տղէտ մտքը վարակելու վրայ է համաճարակի մը վրդովիչ արագութեամբը: Հիւանդութիւնը աննշան ու անշուկ կերպով սկսած է, տարածուած է մեծ սասումներով, ու այլ եւս կը կարծեմ որ հասած է այնպիսի սասումանի որ անհնարին պիտի ըլլայ ոչ միայն ախտը մէջտեղէն վերցնել, հապա նոյն իսկ զին-

ու ի ըր անոր ա՛լ աւելի տարածման գէ՛մ:

Որո՞նք են սակայն շարժառիթները այս «մենք ալ կը հասկնանք» ճիշտերու վտանգաւոր հոսանքին գոյացմանը, և եթէ այդ շարժառիթները անհետանան, երեւոյթը ջնջուած կըլլա՞յ ինքնին: Անկասկածօրէն, մէկ-քանի հաս են բուն շարժառիթները. կուսակցական անհատնում վէճերը, անհամերաշխութեան ոգին և մանաւանդ այն կարեւորութիւնը զոր հայ յեղափոխական կուսակցութեանց ներկայացուցիչներ կամ մարմիններ ու և է կերպով տուին իսկապէս անարժան, ազէտ ու յաւակնոտ անձերու: Ասոնց վրայ աւելցուր ազատութիւնը որով այդ մարդիկը ամէն պարագայի ու միջավայրի մէջ ազատ էին իրենց կարծիքը հրահայնելու, նոյն իսկ բարձրաձայն հռչակելու զայն, առանց ուշ գնելու իրենց շուրջը գտնուածներուն գիրքին, արժանիքին, զարգացմանը և հմտութեանը: Անոնց, «մենք ալ կը հասկնանք» ճիշտերուն ըմբռնումովը արժանիքներու հաւասարութիւն մը կը տիրէ. իրենք ազգային փրկութեան գործին զեկալարները պիտի ըլլան, յեղափոխութիւնը իրենք պիտի վերակին յաջողութեան մեծագոյն հաւանականութեամբ: Ա՛լ անոնց աչքին ամէն կարեւորութիւն կորուսած են թերթերը զորս կը կարդան պարզապէս ժամանցի համար, վասն զի անոնց (թերթերուն) կարծիքները, տեսութիւնները և գաղափարները անօգուտ ու վնասակար են հայ ժողովրդին:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԵԳԻՊՏՈՍ ԵՒ ԱՅՎԱԶԵԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ

Դեռ ո՞րքան պիտի սպասեն եգիպտացիք իրենց շնորհալի առաջնորդին, չի գիտցուիր ատի: Պոլսոյ մէջ կիրիլիոյ կաթողիկոսական խնդրէն զատ ուրիշ ա՛յնքան բարդ խնդիրներ կան ձեռնարկի և կարգադրուելիք Այվազեան եպիսկոպոսին ներկայութեամբ որ գուցէ եգիպտոս զեռ անորոշ ժամանակ մը առանց առաջնորդի մնայ և կամ Օրմանեան կիրիլիոյ կաթողիկոս ըլլալէ յետոյ, Այվազեան ալ Պոլսոյ պատրիարք ընտրուի (°) ու Փարսոսի երկրին մեր փոփոխմիտ և թող հայերը յանկարծ բացը մնան և նորի մը ընտրութեանը ձեռնարկեն, քան մը որուն շատ վարժ են յորմէ հետէ վեց ամիսը անգամ մը իրարու ետեւէ առաջնորդի ընտրութիւն կատարեցին:

Բայց մեր փափաքը այլ է. մենք կը ցանկանք որ Այվազեան ժամ առաջ

Երեւոյթը որուն գոյութիւնը և յառաջխաղացութիւնը մատնանիշ ընել ուզեցի, այն երեւոյթներէն է որոնք ամենէն աւելի ուշագրութիւն գրաւելու կարօտ են: Գուցէ զեռ ուշ չըլլայ անոր առաջքն առնելու. ապականութիւն մըն է անիկա որով կը վարակուին մեր ազէտ ու անգիտակից եղբայրները, որոնց բարոյական և նրկական փճացումն է տարիկայ:

Միայն թէ, այն օրը որ վերջնականապէս վերնան կուսակցական վէճերը ու մարի անձնական վրէժխնդրութեանց կրակը, ու համերաշխութեան երջանիկ ու խաղաղ ոգին տիրէ հայութեան վրայ, այս տեսակ տխուր երեւոյթները արգէն ինքնին կանհետանան:

Այդ օրը մենէ ո՞րչափ հեռու է արդեօք:

Ե. Ս.

ՄԻՏԻՔ ԵՒ ԻՐ ԴԵՐԸ ՄԱՐԴ.

ԿԱՅԻՆ ՅԱՌԱՋԻՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ե.

(Շար. 261 րիւն և վերջ)

Եսասիրական զգացումը արդէն անհատին բնական զգացում մըն է: Ամէն ժամանակ պիտի գտնուի մարդոց մեծամասնութիւն մը որ քաղաքակրթական ստիպանքէ պիտի բազանայ, այսինքն այն տեսակ անձերէ՞ որոնք իրենց «ես»ը հասարակութեան օրէնքներէն ու շահերէն վեր պիտի գերադասեն և պիտի ջանան զայն գոհացնել ի վնաս իրենց հասարակութեան: Երբեք կարելի չի պիտի ըլլայ մարդկային բնութիւնը եսականութենէ ազատել. ու որքան լայն գոհացում գտնէ մարդ իր «ես»ին, այնքան աւելի պահանջկոտ պիտի ըլլայ և նոր տեսակ գոհացումներ պիտի փնտռէ, որոնց համար, ինչ-

իւր այժմու պայտօնատեղին ուղեւորի, երթայ բազմի Գահիրէի առաջնորդական ամբիւն վրայ, Պոլսո փաշային ստեւը շոյէ և խնդայ Տիգրան փաշայի քիթին, որպէս զի եգիպտահայերը ժամանակ ունենան ճանչնալու իրենց բարեձայիկ Յովնիսի սգեղը, գնահատեն անոր չքնաղ բարեմասնութի ներքը և... երբ հանգրիպին Մեսրոպ եպիսկոպոսի պաշտօնավարութեան երկրորդ սպազութեանը ու վերջ ի վերջոյ սխալին հասկնալով որ մը ուղեն ատարտուն կանուխ շոգեհաւ զնել զայն և ճամբել աւետեաց երկիրը, զէպի Պոլիսուր նոր կերպիկներ անշուշտ պիտի սպասեն Այվազեանի գալտեան—եթէ իրերու այս ողբալի փիճակը անփոփոխ մնայ մինչև այն ատեն—մենք ծափ զարնենք և ծիծաղենք վրանին:

Այն ազնիւ ձգտումը որ ծնաւ Եգիպտոսի մէջ նախաձեռնութեամբ Տիգրան փաշայի և որով Իզմիրլեան Մերսազանը իրենց առաջնորդ ընտրեցին, ինչու արդեօք չուտ մը քայքայուեցաւ և փճացաւ երբ Օրմանեան չուղեց որ Իզմիրլեան Երուսաղէմէն հեռանայ, բայց մենք շատնց թափանցած ենք այդ գաղափարին, ու եթէ այսօր եգիպտացիք կը գառապարտուին այնքան խիստ կերպով որքան զրուատուեցան իրենց բարեպատեհ ընտրութեան միջոցին որ Իզմիրլեանը պիտի առաջնորդէ իրիմիտանի ազատագրութեան օրինակին, բառին բուն բարոյական իմաստովը, յանցանքը մերը չէ:

Ինչու թուլցաւ նաեւ Տիգրան փաշայ Պոլսո փաշային առաջ գլուխը ձեռնով, ինքը որ ամբողջ հայութեան համակրութիւնը գրաւած էր սոսա՞ ջայլին ազնուութեանը պատճառաւ: Հասարակածի տար կլիման որ ա՛յնքան կորովի և վեհանձն հոգի մը զրած էր իր ազգեցութեան ներքեւ ապրող հայերուն մէջ մինչև անոնց զբեղելու որ քուէարկեն Իզմիրլեանի համար, ինչու յոռի յեղաշրջում մը բերաւ վրանին Պոլսո փաշային ժամատանտ քերտին շուկէն միջոցաւ: Ծաւալի է ասի, մասնաւոր ոգտտ երկրի մէջ ապրող մեզ նման ժողովրդեան մը համար որ չկրնար իր իրաւունքները պաշտպանել անկախօրէն և վատաբար կաշտի կեդրոնի նեխած աղբիւրէն արձակուած հրահանգներէն:

Երբ Պոլիս մերժեց վաւերացնել Իզմիրլեանի ընտրութիւնը, եգիպ-

պէս ներկայ պայմաններուն մէջ, գարձեալ ամէն միջոցներու պիտի գիմէ անխտիր:

Իրաւ է որ պէտք է աշխատիլ այդ «ես»ը անանկ ճամբու մը մէջ գնել, որ կարելի ըլլայ անհատներու եսասիրական հակումները հաշտեցնել ընդհանուրին շահերուն հետ. այսինքն այն տեսակ ընկերական կազմակերպութիւն մը ունենայ, ուր մարդ իր երջանկութեան ազբիրը ուրիշներու կործանումին մէջ ապիպուած չըլլայ միտուելու, այլ իւրաքանչիւր անհատ իր երջանկութիւնը գտնէ ընդհանուրին մէջ և vice versa: Այս կերպով ապահովարար մասամբ պիտի զարդին գոնէ զուտ նիւթական շահերու. հացի կուէն առաջ եկած անվերջ պայքարները, սփրնները, մոլութիւնները և ապականութիւնները: Անհատական շահին ու հանրային շահին փոխադարձ համաձայնութիւնը ապագայ ընկերական բարոյականին մեծագոյն սկզբունքը կը կազմէ. Գարդնիբու մէջ, պատանկութեան հասակէն, երբ ազնւիտաբար այնքան արմատիկ է ու զիւրազատ և ներքին ու արտաքին տպաւորութեանց ա՛յնքան զիրաւմասելի, պէտք է ցանկ այս սկզբունքներէն հիմերը: Ասիկա պէտք է ըլլայ մեր գաստիարակներուն գերադրին նպատակը. արթնցնել և զարգացնել պատանիին մտքին մէջ ընկերական օգտակար հակումներն ու ընդունակութիւնները, և ինչզեղ վնասակարները, Այս կերպով պիտի կազմուի քիչ քիչ նոր սերունդ մը առողջ, շինիչ բարոյականով և ուժիւրները, խաբէութիւնները, ապականութիւնները պիտի անհետանան տակաւ: Այս կերպով ազգերը պիտի մակարդան իրենց սեղծ ու հասկանալիութեան ոլորտներուն մէջ, ուր իսազաղ ու իտէալ կեանքը իր փաղփուն ու երանաւէտ ցոլիքով պիտի փոփոխուի մարդոց զէմքին վրայ: Ահա ճշմարիտ գիտութիւնը, առանց որուն կեանքը քան մը չարժեք, և զոր մարդիկ պէտք է աշխատին թէ իւրացնել և թէ՛ ուրիշներու հաղորդէն անոր տիրանալու, թո՛ղ հայրերն ու մայրերը իրենց զաւակներ-

քին, ու եթէ այսօր եգիպտացիք կը գառապարտուին այնքան խիստ կերպով որքան զրուատուեցան իրենց բարեպատեհ ընտրութեան միջոցին որ Իզմիրլեանը պիտի առաջնորդէ իրիմիտանի ազատագրութեան օրինակին, բառին բուն բարոյական իմաստովը, յանցանքը մերը չէ:

Ինչու թուլցաւ նաեւ Տիգրան փաշայ Պոլսո փաշային առաջ գլուխը ձեռնով, ինքը որ ամբողջ հայութեան համակրութիւնը գրաւած էր սոսա՞ ջայլին ազնուութեանը պատճառաւ: Հասարակածի տար կլիման որ ա՛յնքան կորովի և վեհանձն հոգի մը զրած էր իր ազգեցութեան ներքեւ ապրող հայերուն մէջ մինչև անոնց զբեղելու որ քուէարկեն Իզմիրլեանի համար, ինչու յոռի յեղաշրջում մը բերաւ վրանին Պոլսո փաշային ժամատանտ քերտին շուկէն միջոցաւ: Ծաւալի է ասի, մասնաւոր ոգտտ երկրի մէջ ապրող մեզ նման ժողովրդեան մը համար որ չկրնար իր իրաւունքները պաշտպանել անկախօրէն և վատաբար կաշտի կեդրոնի նեխած աղբիւրէն արձակուած հրահանգներէն:

Երբ Պոլիս մերժեց վաւերացնել Իզմիրլեանի ընտրութիւնը, եգիպ-

րուն հաղորդեն զայն իրրեւ ժառանգութեանց ամենէն թանկագինը, թո՛ղ ժողովուրդին գաստիարակները որոշեն զայն տարածել, և թո՛ղ ամէն մարդ իր ճիգերը միացնելով, աշխատի վառել յոյսը արտերու մէջ այն փրկարար ճառագայթները որոնք իրենց մէջ առողջութիւն կը կրեն և միանգամայն յոյս:

Չըսենք թէ մենք անկարող ենք մարդկութեան ճակատագրին վրայ ազդելու: Աշխարհի մէջ ամէն ինչ համերաշխօրէն կընթանայ, և ամէն ազգ, ինչպէս ամէն անհատ, ընկելու թեան մէջ իր որոշ աեղը, զերբ ունի զոր խղճմտօրէն կատարելուն պատասխանատու է: Այդ զերբ երբեք տեսականօրէն չի կրնար հակառակութեան մէջ ըլլալ անհատին զիրին հետ: Ամէն ազգութիւն կերպով մը մարմնացումն է յատուկ գաղափարի մը. իտէալի մը և այս գաղափարը, այս իտէալը իր կեանքին իսկական էութիւնը կը կազմէ, առանց անոր կարծես պիտի զարդի գոյութիւն ունենալէ: Այս տեսակետով է որ վերջի վերջ Գուգէն ըսած է թէ՛ ազգ մը իսկապէս իրրեւ ազգ ճանչցուելու համար պէտք է որ արտայայտութիւնն ըլլայ գաղափարի մը որ պատմութեան մէջ իրեն համայնական բնաւորութիւն մը և որոշ անշուշտ զիմագծութիւն մը պիտի սայ: Որքան ատեն որ ազգ մը հաւատարիմ կը մնայ այդ գաղափարին կրնայ պատմութեան մէջ փառաւոր զեր մը իտէալ, իսկ այնօրէն որ գաստիք կըլլայ, իսկայն իր զոյութիւնը կուրանայ և իր անկումը կը սկսի, ու կը մեռնի ապրբեր պայմաններու մէջ ծնելու համար: Պատմութիւնը ամբողջովին անընդհատ յաջորդութիւն մըն է իրենց իտէալին ուր ցամաք մեծող ազգերու և նոր ծնող ժողովուրդներու ապրած կեանքին:

Բայց, ինչպէ՞ս պէտք է ազգերու գոյութիւնը հաշտեցնել մէկ կողմէ անհատներու գոյութեան և միւս կողմէ ամբողջ մարդկութեան գոյութեան հետ:

Արդէն առաջին յօդուածներուն մէջ ըսի թէ մարդկային ընկերական կազմակերպութեան գերադրին նպատակը անհարկ կազմելն է, և թէ ազգերն ու մարդկութիւնը միջավայրներ են, տեսալք պէտք էր յամառէին, պըն, զէին իրենց ընտրելու զրայ և վճռէին թափուր ձգել իրենց ամբողջ մինչև վերջը: Այս էր իրենց պարտքը ու այս մտայն կը վայելէր այնքան եղիլի մտաորութեամբ մը ճամբայ ելնող ալ մը ազատամիտ հայերուն համար:

Բայց այսպէս չեղաւ գծադրաբար. Օրմանեան իր քարտէլի շուկէ մինչև չեւ հոն ալ հասցուց, բեկանել տուաւ ընտրութիւնին և անսքալ գլուխնին ծած Դուրեանը առաջնորդ ընտրեցին:

Եղիլէ կպիսկոպոս որ իր անպատեհ մէկ արարքէն յետոյ—Եւրոպայի մէջ կատարած քիտուր պատուիրակութիւնը—դեռ կը պահէ օր անուի մը փափուկ զգացումները մերժեց կերթալ եգիպտոս ոչ թէ իրեն Սրմալի վանքին մէջ մնալը անհրաժեշտ տեսնելով, հապա անոր համար որ Իզմիրլեանի ընտրութեան ընկալումը պէտք էր ատանց հետեւանքի մնար այս էր իր մտածումը ու այս պէտք էր ըլլալ արդէն քիչ շատ իր ազգին իրաւունքները պահպանել զիտցող անհատի մը պայտականութիւնը

Օրմանեան ատով ալ չյուսահատուցաւ: Այվազեանը կար գիմացը միշտ

ուր անհատը պէտք է իր կարողութիւնները զարգացնէ եւ իր պաշտօնը կատարէ: Անձնակ մարդը հասարակութենէն, ու non-étre մը պիտի ունենաս: Անհատը չի կրնար իր պատկանած հասարակութենէն դուրս ապրիլ: Ինչպէս տերեւը չի կրնար ապրիլ, եթէ զայն անշատենք այն ծառէն ուրկէ կը քաղէ իր կեանքի հիւթը: Հասարակութիւնն է որ անհատին իր նկարագիրը, գաղափարները, նախապաշարուածները կը ձևազօրէ: անով է որ անհատը կայրի: Ինչպէս հասարակութիւնն ալ կայրի անհատներով:

Բայց ազգային ու անհատական կեանքը բոլորովին չի կրնար բաւել մարդկային շփարկութիւնները զարգացնելու համար: Այստեղի վրայ բոլոր մարդոց ճակատագիրը համեմատելի է քանի որ եղբայր են: Աւրիւն իրենց մէջ կապ մը կայ, ուրկէ կը ծնին իրենց փոխադարձ պարտականութիւնները, որոնք մարդուն ամենէն ընտիր կարողութիւնները գործունէութեան կը մղեն: անհատին համար քայքայական տոնանքները հոգեւոր մասն է: Ազգերն ալ չեն կրնար առանձնանալ քանի որ անոնցմէ ամէն մէկը մարդկութեան միայն մէկ երեսը ներկայացնելով, ամէնքն ալ անկատար են: Եւ կատարելագործուելու համար պարտաւոր են յարաբերութեան մտնել մարդկութեան միւս անդամներուն հետ: Այսպէս ազգերը այն են մարդկութեան նկատմամբ, ինչ որ են անհատները ազգերու բաղադրամասեր, հետեւաբար բոլոր մարդկութիւնը փոխադարձաբար համեմատելի է իրարու:

Արդ պէտք է մարդկային սեռը անանկ կազմակերպութիւն մը անհնայ որ, ազգային կեանքը զիւրացնէ անհատական կեանքը եւ տեղեկական կեանքը ցլանայ ազգային կեանքին մէջ: Անհատը չի կրնար խափանել ազգային կեանքը, որովհետեւ ինքն իր ձեռքով պիտի ջնջած ըլլար իր կեանքի միջավայրը: անհատական ազգ մը չի կրնար արդէ կանգնանալ ընդհանուր կեանքին որուն միայն մէկ ներդրանակ հատուածը կը ներկայացնէ ինք, մասնական ու բացարձակապէս լեւակալ, ու ետականութիւնը կը սպաննէ իր

զրկին մէջ նետուողները: Այս կերպով անհրաժեշտ կրլլայ կազմակերպութիւն մը որ ներդրանակութեան մէջ պահէ ընդհանուր, ազգային եւ անհատական կեանքերը:

Այս կազմակերպութեան հասնելու համար պէտք է որ նախ մարդիկ օժտուած ըլլան հաստատուն նկարագիրներով եւ սիրեն զիրար: Նկարագիրները տեսակ մը ստացական ուժեր են, եւ ուժ մը կրնայ երկու կերպով գնահատուիլ: նախ ինքզինքին հետ համեմատելով, եւ յետոյ ուրիշներու հետ համեմատելով: Ուրիշներու համեմատութեամբ ուժ մը այնքան աւելի մեծ է, որքան աւելի կը դիմադրէ անոնց: Ինքզինքին հետ համեմատելով, ուժ մը այնքան աւելի մեծ կրլլայ, որքան իր արդիւնքները զինքը կտոանդորդեն ոչ թէ իր ոչնչացումին, այլ զարգացումին: Եթէ քննենք մարդոց կեանքը, պիտի տեսնենք որ անոնց անկումը կը բացատրուի իր անհատը յորինուածքին մէջ թերութեամբ կամ ձգտումի մը չափազանցութեամբ, ինչպէս իրենց յաջողութիւնը կարելի է մեկնել ցանկութեան մը չափառութեամբ կամ յատկութեան մը հզօրութեամբ:

Եւ սակայն մարդը իր բոլոր կարողութիւններով ուրիշներուն օգտակար հանդիսացնող միակ կարողութիւնը սիրելու կարողութիւնն է: Որովհետեւ սիրելը ուրիշին երջանկաբար իրեն նկատուի ընդհանուր զինքը անոր ստորադասելու ու ստոր նուիրելու կը թրթռայ: Իր ներկայութեան կը թրթռացնէ մեր սրտին յարեբը ինչ ալ ըլլայ իր առարկան եւ ինչ ձեռով ալ արտայայտուի: Բնածին բարութիւն կամ մեծածնութիւն, ըլլայ որն սէրը, մարդկային անձի մը ամբողջական նուիրումը ուրիշ սեռէ անձի մը եւ երկու կեանքերու ի մի ձուլումը: Ըլլայ ընտանեկան սէր, հոգրայրական կամ քրոջական, հայրական կամ որդեկան, ըլլայ սերտ ու անխախտ բարեկամութիւն, այսինքն անվերապահ հաւատարմութիւնը փոխադարձ անշահախնդիր համակրութիւնը երկու անձերու՝ որոնք երբեք տրիւնով իրարու չեն կայրած: Որքան լայն ըլլայ իր առարկան, այնքան գեղեցիկ կը զըտ-

նենք զինքը: Ասոր համար է որ պատմութեան մէջ մեր գերագոյն հիացումը կը վերապահենք այն անձնաւորութեանց որոնք հայրենիքի ու հասարակութեան սիրուն համար զոհուած են:

Մեծ իտէլիաներու ծնիչ միակ ուժն է սիրը, որ շարժարանքի ու փորձութեանց քառասին մէջէն անսայթազ կը բանայ իր ճամբան, ու կուռճանայ, կը լայնանայ կարծես որքան աւելի հզօր ըլլան զինքը խափանող առգելները: Ուշ կամ կանուխ անիկա կը գրաւէ մեր սիրտը: Երակներու դէմքէն, լանջքից խորէն կը զգաստահիր այն հասնուտին որ քեզի պիտի հասկցնէ թէ ինչ համ է րոպանքը վշտին: Միշտ քաղցր է մեզի համար իր ներկայութիւնը, որովհետեւ երջանիկ տառապանքին ցաւատանջ արտայայտութիւնն է ան, եւ իր ամենանուրբ եղեւջներուն մէջ հոգիէն փրթող տխուր հառաչանքներ միայն կը պարունակէ: Ու մարդուն համար աւելի մեծ երջանկութիւն մը չի կայ յան իր ցաւերուն վեճ պաշտամունքը:

Աւելի յարմար խոսք մը չեմ գտներ վերջացնելու համար ներկայ յորտաններու շարքը: քան այն սողերը որքա գրեց Ֆրանսացի անմահ քնարերգակը: Ընտանիցի գրականութեան ամենէն յորդազեղ ու զգայուն հոգին՝ որ իր ամբողջ կեանքին ու տաղերուն մէջ տառապանքի միտքեղանքներով քերական քերական անսահման պոսթիկու մի մը պահուն գոչեց հիասթափած:

Aimez ce que jamais on n'a pas vu deux fois.
J'aime la majesté des souffrances humaines.
ԼԵՒՈՆՍՍԱՐԳՈՒՅԱՆ

ՆՈՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Յ. Կ. ՊՕՆԸՆԵՖԵԱՆԻ
Ա. Տարի 60 սանթիմ, Բ. Տարի 1 ֆրանք, Գ. Տարի 1 ֆրանք:
Գոնէ 20 օրինակ գնողներու համար 15 0/0 զեղչ:
Վճարումներ կանխիկ:
Գնանքարտերու համար գիմել յօրինողին սա հասցէով:
Յ. Կ. ՊՕՆԸՆԵՖԵԱՆ
(Պուկարիա) Վառնա

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Բարիչի հայերու մատրան շինութեան ամբողջ ծախքը պիտի հազայ, կըսուի, Պ. Մանգաշեան: Ենթադր պիտի բաղկանայ մատուռէ մը, որուն քով պիտի գտնուի առաջնորդարանը:

— Հայ արուեստագէտ մը Պ. Սեփոն Պէզիրճեան եւ իր ազդիկը արեւելեան արուեստներու մէջ ունեցած հմտութեան եւ ճաշակին համար, շքաբամ ստացած են արուեստահանգէսին քննիչ յանձնաժողովէն:

— Ս. Էլմիածին սինոգոգի վերջին պաշտօնական օրագրութիւնը ծայրէ ծայր պատժական տնօրինութիւններ կը պարունակէ կարգ մը քահանաներու նկատմամբ, որոնց նմաններուն այս կողմերն ալ միշտ հանդիպած են: Էլմիածին հասած խաչանշաններէ, օրհնութեան կոնդակներէ եւ սիտպաներէ յետոյ, երբ այս կարգի լուրեր ալ կուգան, մեծ ուրախութիւն կը պատճառեն: Փափաքելի է որ Պոլսոյ կրօնական ժողովն ալ այս տեսակ կրօնական տնօրինութիւններ ընէ մեր շատ մը անլուրջ քահանաները կարգի հրաւիրելու համար:

— Երուսաղէմի պատրիարք Տ. Յարութիւն Սրբազանը կը ծանուցանէ թէ Գարագաշեան Մարկոս վարդապետ ինչ ինչ պատճառներով բոլորովին արձակուած է:

— Պօլսէն կը հաղորդեն թէ կրօնական ժողովոյ երկու ատենապետները՝ Գրիգորիս եպիսկոպոս Յովհաննէսեան եւ Վահրամ եպիսկոպոս Մանկունի ժամանակէ Տրիփեր կրօնական ժողովի նիստերուն չեն երթար: Տր կարծուի թէ Դրան կողմանէ ար-

պահանջող եւ սպասող, պէտք է որ անոր բերանը սկզբ մը նետեր եւ որոշեց առաջնորդ ընտրել ալ զայն եզրկատոսի թեմին վրայ ի վարձատրութիւն: Այլաթեմանի կաթողիկոսական ընտրութիւնը բեկանելու դործին մէջ տուած օժանդակութեան ինչպէս արդէն պայմանագրուած էր մէջերսին:

Այլազեանի փր Գրիգոր Բարձրը Օրմանեանի գործիք ըլլալէ զատ ուրիշ բան չէր կրնար ըլլալ: զիրար գտած էին, երկու նմանասէրներ եւ երկուքն ալ միեւնոյն ճամ, էն եկած: Կարծես այդ մարդիկը իրենց եկեղեցիի փոխած ժամանակին փոխանակ իրենց նոր ասպարէզին մէջ ազգին իրաւունքները պաշտպանելուն ուխտը ընելու, ուխտած են փորձանքներ բերել անոր գլխուն եւ ժամատարի մը չափ վնասակար դառնալ:

Այս ուխտին հաւատարիմ մնալու համար էր որ Այլազեան թուրքին կողմանէ, լէաթեմանի կաթողիկոսական ընտրութիւնը բեկանելու խնդրոյն մէջ միեւնոյն ժողովեց, համազեց Բաղաբական ժողովոյ աշխարհական անդամները եւ յաջողեցաւ մինչեւ իսկ կրօնական ժողովի անդամ մէկ երկու տխուր քահանաներու քուէները ապահովել որ ընտրութիւնը բե-

կանի: քան մը որ Բզգ. Բնդհ. ժողովոյ ձեռննառութեան կը պատկանէր: Այդ օրէն սկսեալ Այլազեան վարձատրութեան կը սպասէր: Օրմանեան ի զուր ջան ոչ զայն եզրկատոսի թեմին վրայ եպիսկոպոս ձեռնադրել տալ ու քաւակաւանացաւ: Ռոտոսթոյի թեմը գործիք ընելով եւ անա պայծառ առաւօտ մը վարդապետներու երամի մը հետ Այլազեան Էլմիածին կը մեկնէր եպիսկոպոսանալու:

Տառեան Արթին փաշայ որ վերին վարիչն էր ազգին գործերուն, շատ անպատկար իր մը չգոյացուց Այլազեանի վրայ, ընդհակառակը ի դէպ ժամու յանձնարարեց զայն իր ազգական Պօղոս փաշային եւ օր մըն ալ լսեցինք թէ Այլազեան եպիսկոպոսի առաջնորդ ընտրուել է:

Այլազեանի շահատակութիւնները մէկ երկու հատ միայն չեն որ կարենանք թուել հոս մի առ մի: շատ են անոնք եւ երկար կըլլայ շարքը այս տխուր մարդուն արարքներուն որոնք ամբողջ ազգին զգուանքը եւ լուսանքը միայն հրաւիրած են իր վրայ: յիշենք որ Իզմիրլեանի պատրիարքութեան ժամանակ, Յովակիմեանի վարչութիւնը երբ ուզեց Տրապիզոնի ջարդէն վերջը զին-

քը հոն զրկել որպէս զի թեմը անհովիւ չմնայ եւ ժողովուրդը սփոփուի: Այլազեան մերժեց երթալ այն պատճառաւ որ ջարդին հետեւանք Տրապիզոնի առաջնորդական սնտուկը աննախանձելի կացութեան մը մատուած էր: Ի զուր եղան իր կողմէ հատարարիմ մնալու համար եղած յորդորները, Այլազեան քուսա կը պառ, ջարդ, դժբաղդութիւն հալածանք իրեն համար կարեւորութիւն չունէին, ինքը կա, ծես եկեղեցոյ պաշտօնեայ մը չէր ալ ոչ զգին անգութ ճակատագիրը շահագործող մը եւ վերջապէս երկար քանակութիւններէ յետոյ երբ պատրիարքարանը անոր մէկ քանի ամսականները հոգալու փութկոտութիւնը ունեցաւ: Այլազեան ճամբայ ելաւ դէպի Տրապիզոն 1896ի Մայիսի մէջ, ճարտար ոսկիի կողմից գուժար մը զըրպանը գնելէ վերջը: Քիչ յետոյ Յունիս 22ին երբ Իզմիրլեան հրաժարեցաւ, Այլազեան չունչը Պոլիս առաւ: քանի որ ալ պատրիարք մը չկար ուրկէ ակնածել Իսկ Կիլիկոյ կաթողիկոսական նոր ընտրութեան մէջ Այլազեանի կատարած գերը ամենուս ծախքի է եւ վերջերս այնքան զըրուեցաւ այդ մասին որ աւելորդ կը սեպենք կրկնելը: Արդէն ուր որ ազ-

գին իրաւունքները բոնաբարելու խնդիր մը կայ: Այլազեան հոն է անիկայ է որ կը նպաստէ գործին յաջողութեանը եւ Օրմանեան ու Տառեան աւելի լաւ կերպով չէին կրնար վարձատրել իրենց չու պաշտօնեան:

Ահա այս տեսակ գարշելի արարած մըն է զոր եզրկատոսիք իրենց առաջնորդ ընտրեցին: Պօղոս փաշա գոն կրնայ ըլլալ, վասն զի ինքը որ ազգային գործերէն քան մը չի հասկնար, զիմացը պիտի ունենայ ջմարդ մը որ իր սմէն ըսածին գլուխ պիտի ծռէ եւ որ պիտի կրնայ ֆրանսերէն մէկ քանի բառ ծամմելով ինքզինքը եզրկատոսի հայոց Մհրաւրոյիսը ներկայացնել ինչպէս կը փափաքի ինքը Պօղոս փաշայ:

Մեզք այնքան յուսատու այդ կուրեւոր թեմին ուր իրարու այնքան հակառակ հովեր փչեցին չլերջին տարիներս:

ՊԵՐՃՈՐԴԻ

—) (—

գելք մը յարուցուած է և կամ գիտողութիւններ եղած են յիշեալ եպիսկոպոսներուն վերջերս բռնած հակա-Օրմանեան ընթացքի մասին: Հաւանորէն անոնք վշտացած են Օրմանեանի և անոր արքանեակներէն Տէր Ներսէսեանի և Րուպէր էֆէնտի ըրած դանդաղանքուն մասին, որոնք կիրակիոյ կաթողիկոսական ընտրութեան համար ներկայացուելիք ցուցակը մերժելուն շուրջը կը դառնան: Ինչ որ ալ ըլլաւ, վերոյիշեալ երկու արի եկեղեցականները պէտք չէ ընկրկին ո՛ր և է արգելքի գէժու Օրմանեանը մինակը, ինք իր գլխուն ձգելու անխոհեմութիւնը շընեն:

— Յառաջիկայ թուով պիտի հրատարակենք մեր Փարիզի աշխատակիցներէն Ս. ի Խաղաղութեան Վեհաժողովի մէջ յուզուած հայկական ինքրի մասին գրած շահեկան մէկ գրութիւնը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պոլսէն կը հեռագրեն թէ՛ մէրտինանտ լշխանը հոն կը պատուի հոկտ 12 ին:

Պարոն Զինովիէֆ, ռուսական գեսպանը, Թուրքիոյ արտաքին գործոց նախարարին հետ տեսնուած ատեն, պահանջներ է որ էրզրումի ռուսական փոխ-հիւպատոսին վրայ յարձակող քրիտերը ձերբակալուին, պատժուին, և հրոսակ քիւրտերու աւարառութեանց վերջ մը տրուին անպատճառ երէկի հասած թերթերը կը ծանուցանեն թէ՛ Սուլթանը Զինովիէֆին իֆթիխարի ազամանդակու պատանշանը նուիրեր է, և յատուկ պատգամաւորութիւն մը պիտի զրկէ Լիվատիա Զարին բարի գալուստ մաղթելու համար: Այս պատգամաւորութեան պիտի ընկերանայ նաեւ Զինովիէֆ:

Չարը կսպառնայ, Սուլթանն ալ մաքիազէլական միջոցներով զանի կորօրէ ու կը խարէ: Տեսնանք այս խեղկատակութիւնը մինչեւ ե՞րբ պիտի տեսէ:

— Եհնը Սօֆիայէն հեռագիր մը ուղղեր է Սուլթանին և իր ջերմ շնորհակալութիւնները յայտնելու համար: Սուլթանն ալ փոխադարձաբար պատասխանել է անոր շատ փառաբանական լեզուով մը: սակայն Պոլսոյ բարձր շրջանակներու մէջ անհուստալի կերելի այս լուրը:

— Միացեալ նահանգներու կառավարութիւնը որոշել է վերջնական գիմում մը ընել Թուրքիոյ հայկական ջարդերուն ատեն իր հպատակներուն կրած փաստը գան-

ձելու մասին: Ամերիկայի թուրք գեսպանը Պոլիս վերադարձել է փաստներու հառուցման խնդիրը վաղ ընդ փոյթ կատարել տալու համար:

— Պոլսոյ մէջ իտալացի յաճնակատար մը, պալատան շորս լըրտեաններու տուած տեղեկութեան վրայ, առաւօտ մը իբր անիշխանական կը ձերբակալուի, սակայն իտալական գեսպանին պահանջին վրայ ազատ կարձակուի:

— Թուրքիոյ ելեւմտական նախարարը անցեալ տարւոյ պիտու ճէին մէջ մէկ միջին թրքական ոսկրի բաց մը ցոյց կուտայ: Քի գիտցուի թէ Սուլթան Համիդ գահակալութենէն ի վեր գտած է ելեւմտական նախարար մը որ պատրաստ դրամ ունենայ գանձին մէջ տարեկան հաշուեկշիռը ըրած ժամանակ: Ըտոյններ կան թէ Յակոբ փաշա ժամանակ միայն գանձը այնքան զգալի բաց չէր ունեցած:

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Բոլոնիոյ ընկերակազմական կուսակցութիւնը մահուան վճիռ արձակել է Զարին գէժ, ռուսական ներկայ անտանելի ըէֆտը տապալելու համար: Որոշուել է ուժանակով ոգը հանել զինուորական վարժարան մը, ուր, օժման օրը, ներկայ պիտի գտնուէր կայսերական ամբողջ գերդաստանը: սակայն այս որոշումը վիճած է և ձերբակալուած են ճարտարագետը և շատ մը բանուորներ, որոնք մասնակցութիւն ունեցած են այս դաւադրութեան մէջ: Այս լուրին վրայ Բոլոնիոյ մէջ տեղի կունենան ամէն օր ձերբակալութիւններ, որոնց մէջ կը գտնուին բարձրաստիճան անձնաւորութիւններ, հրապարակագիրներ և գրագէտներ: Ռուսական ներքին գործոց նախարարութիւնն ու ոստիկանութիւնը մեծ յուզման մէջ են և անմիջական ամենախիստ միջոցներ ձեռք առած են այս վտանգաւոր լուրին Ռուսիոյ ներքին նահանգներու մէջ տարածուելուն առաջին անգամը:

Ս Ե Ր Պ Ի Ա

Պեկերատէն կը հեռագրուի թէ՛ պարսից Եհնը հոկտ. 7 ին հոն հասել է, կէս օրին: Կայսրանը կը սպասեն եղբր թագաւորը, նախարարները, բարձրաստիճան եկեղեցականներու գասը, ինչպէս նաեւ դիւանագիտական ամբողջ մարմինը, Երկու միապետներուն տեսակցութիւնը շատ սիրալիր եղբր է: Եհնը միծախանգէս արարողութեամբ առաջնորդուել է թագաւորական պալատը, ուր Ալեքսանդր թագաւորը Եհնին ներկայացուցեր է թագուհին: Եհնը պիտի երթայ Պուտաբէշթ ուր մէկ քանի օր հանգիստ առնելէն ետք՝ Ռուսիա պիտի մեկնի:

Չ Ի Ն Ա Ս Ս Ա Ն
Չինաստանի արքունիքը տեսնելով որ օտար կառավարութիւններու մէջ համաձայնութիւն մը մտաւորու է և կարելի պիտի ըլլայ զայն բռնի Բէրին բերել, որոշել է աւելի հեռուները մինչեւ Սին-Կան-Քու երթալ որպէսզի զօրաց առաքում մը դժուարութիւններու բազմի և ձմեռն ալ վրայ հասնելով, բանակցութիւնները ապարդիւն մնան:

— Սալըզլըրի իր հաւանութիւնը յայտնած ըլլալով Գերմանիոյ առաջարկին, կը մնար Ամերիկան որ Տէլքասէի առաջարկը աչքի առաջ ունենալով իր կողմանէ նոր նօթա մը ներկայացուցած էր պետութիւններուն: Այս նօթան մէջ Ամերիկայ կըսէ թէ պէտք է ոտկալ Չինաց կայսրը որ Բէքին գայ և կազմէ առաջագէժ տարրերէ նախարարութիւն մը: Կայսեր Բէքին հասած օրն իսկ պագրեցունէ կայսրուհին իր պաշտօնէն և գնէ զայն անկարողութեան վիճակի մէջ անգամ մըն ալ չը խառնուելու համար կառավարական գործերու: Գըլխատել տայ թուան իշխանը և ինքն ալ, կայսրը, պաշտպանուի օտար զօրքերէն:

— Ֆրանսայի արտաքին գործոց նախարարը Պ. Տէլքասէ նօթա մը ներկայացուցած է կառավարութիւններուն Չինաստանի խնդրոյն համար և կառաջարկէ 1. Բէքինի գեսպաններուն ներկայացուցած գլխաւոր յանցաւորները խտու պատժել: 2. Չինաստանի մէջ զէնք մտցնելը արգելել: 3. կառավարութեանց և ընկերութիւններու, հաստատութիւններու և անհատներու կրած փաստները տուժել: 4. Բէքինի մէջ պահել մշտական պահակ զօրաց շոկատ մը ի հարկին պաշտպանելու համար գեսպանատուները և օտար հպատակները: 5. Թաքուի պատնէշները քանդել: 6. Թիէն-Չինէն մինչեւ Բէքին գտնուած միջոցին մէջ մէկ քանի զինուորական կէտեր հաստատել, ճամբան ազատ պահելու և անակնկալ պարագայի մը մէջ օտարականներու և գեսպաններու փախուստը զիւրացնելու համար:

— Ալեքսիէֆ ռուս ծովակալը զրահաւորով մը Թաքուէն Նանչայ-Քուան կերթար, երբ Չինական զրահաւորները իրենց թաքստոցէն ելնելով փորձեցին կուռի բռնուիլ և Ալեքսիէֆ ծովակալը իր նուովը գերի բռնել: սակայն ռուս ծովակալին զրահաւորը արագընթաց ըլլալուն պատճառաւ յաջողեցաւ խոյս տալ և ազատիլ: Բէթէրսպուրկի մէջ կը մտածեն թէ հարկ է որ չինական կառախումբը շնչուի և կամ գրուուի օտար դաշնակից զրահաւորներու միջոցաւ:

Ն Ա Մ Ա Կ Ա Ս Ո Ւ Փ
Կը խնդրուի նամակագրներէն ուչադրութիւնը դարձնել իրենց փակցուցած նամակագրոյ մը վրայ, որ շատ անգամ նամակին ծանուութեան չի համապատասխանելուն կը ստիպուինք տուգանք վճարել: Ասկէ ետքը այդ սեսակ նամակները պիտի մերժենք ընդունել:
— Ուր սարեկան մանչ գաւակ մը ի հօրէ որը միացած ըլլալով իր մայրը կը փափարի զայն որդեսէր ազգայինի մը իբր որդեգիր յանձնել օրինական միջոցներով:
Փափաքողները կարող են դիմել խմբագրութեանս:

« Ծ Ա Ի Դ »

Շաւիղի 14րդ թիւը յառաջիկայ երկու շաբթի հրատարակ կելլայ հետեւեալ բովանդակութեամբ:
«Անհատին արժանիքը եւ հասարակաց կարծիքը», Լեւոն Սարգսեան. — «Ձէյթուն», Ե Սրմաքէշխանլիան. — «Գիտական արձագանգ», (սննդառութեան գերպեր), Յ. Ս. Փափագեան. — «Մահուան պէս դառն» (նորավէպ), Ի. Ն. — «Հայկական խորհրդը խաղաղութեան վեհաժողովին առջեւ», — «Կիսամեակ»:

ԹԱՏՐՈՆ ՍԱՆԹՐԱԼ

«Վէսէլլո» հայ գերասանական խմբին կողմանէ պիտի ներկայացուի այս գիշեր ժամը 9/ին, «Բասն զաւակով հայր մը» երգախառն կատակերգութիւն 3 արար:

Վաղը, կիրակի գիշեր պիտի ներկայացնեն «Գիւղացիին Ոգչիկը» խիստ ծիծաղաշարժ կատակերգութիւն 3 արար:

Այս գիշեր Պ. Ճիվանի խմբին կողմանէ պիտի ներկայացուի «Սէզառ Պօրճիա» եղերգութիւն 3 արար:

Վաղը, կիրակի գիշեր պիտի ներկայացնեն «Երկու կորուսեալ եղբարք» եղերգութիւն 3 արար:

Երգ և պար Տիկին Լիզայի և Օր. Գաթինայի կողմանէ:

Սգրոպաթ՝ Օր. Գաթինայի կողմանէ:
Գինեբը ԱՄԱՆ

ՉՈՒԱՐԱՆ «ԿՈՒԹԷՆՊԵՐԿ»
(Տպագրական տառերու)

Կարճր մեռաղ . Ողիղ կարգ Հաշտար բարձրորդի

Ամէն լիզուէ տպագրական տառեր և զանազանք՝ զոհացուցիչ գներով Հասցէ՝

Fonderie typographique, Gutenberg, Sophia, Rue Graff Ignatieff № 3